ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱՐՈՅԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Ն. Մ.

Հասարակության հանդեպ լրագրողի պարտականությունների շրջանակը ներառում է իր հանդեպ պահանջների մի աբողջություն, որն այլ կերպ կոչվում է բարոյական պատասխանատվություն: Բարոյականություն հասկացությունը մի դեպքում բնորոշում է մարդու պրակտիկ գործունեության վարքի ոլորտները, մյուս դեպքում հանդիսանում է հասարակական գիտակցության, էթիկայի փիլիսոփայական հետազոտության օբյեկտի ձևերից մեկը:

Լրագրողի հանդեպ բարոյական նորմերի պահանջի լայն շրջանակը պայմանավորված է առաջին հերթին այն հանգամանքով, որ լրագրողն ինքը գործիք է մարդու կողմից մարդու մշակման համար: Այս մասնագիտության առանձնահատկությունն այն է, որ այն նպատակաուղղված է ազդելու մարդկանց կամ հասարակական խմբի վրա, որի հոգևոր պահանջների բավարարման նպատակին է ծառայում լրագրողի գործունեությունը: Եվ քանի որ այն հիմնականում զուգակցվում է մարդկանց ճակատագրերի հանդեպ պատասխանատվությանը, ուրեմն *լրագրողի գործունեության ընթացքում պրոֆեսիոնալիզմը համարյա միշտ հանդես է գալիս նրա բարոյականության տեսքով:*

Ստեղծագործական աշխատանքի բնույթից ելնելով՝ լրագրողի գործունեության ոլորտը չափազանց բազմազան է, իսկ աշխատանքային գործընթացը՝ լի անակնկալներով: Հենց այս է պատճառը, որ լրագրողի գործունեությունը շատ դեպքերում հնարավոր չէ կանոնակարգել հասարակական ինստիտուտների կողմից, իսկ սա նշանակում է, որ նման իրավիճակներում վարքագիծը հնարավոր է որոշել միայն տվյալ լրագրողի բարոյական կարգավորիչով: Եվ այդպիսի իրավիճակներն անսահման շատ են:

Լրագրողի բարոյական պատասխանատվության կառուցվածքում կարելի է առանձնացնել երկու կարևոր պահանջ: Դրանցից մեկը միավորում է պրոֆեսիոնալիզմի էթիկայի, իսկ մյուսը՝ լրագրողի ծառայողական էթիկայի նորմերը:

Բնականաբար, շատ ավելի տարողունակ բարոյական վերագրում է պարունակում առաջին խումբը՝ պրոֆեսիոնալիզմի էթիկան: Սրան է ենթարկվում լրագրողի ողջ գործունեությունը, որն ուղղված է ծառայելու այն մարդկանց, որոնք զգում են նրա՝ լրագրողի հատուկ իմացությունների, մասնագիտական ունակությունների շնորհիվ համապատասխան ձևով մշակված և մատուցված տեղեկատվության կարիքը: *Լրագրողի գործունեության ընթացքում սկզբունքների, նորմերի և բարոյական կարգավորման ամբողջությունն էլ հենց ընդունված է անվանել լրագրողի մասնագիտական էթիկա:*

Ի տարբերություն ծառայողական էթիկայի, որը դրսևորվում է տարբեր աշխատանքային կոլեկտիվներում՝ տարբեր բարոյական շփումների կարգավորմամբ, պրոֆեսիոնալ-մասնագիտական էթիկան արտացոլում է նոր, լրացուցիչ՝ բարոյական տեսակետից յուրահատուկ տարրերի որակ, որոնց շնորհիվ էլ որոշ մասնագիտություններ առանձնանում, տարբերվում են մյուս մասնագիտություններից: Այս տարբերակման էությունն այն է, որ ժուռնալիստիկան պատկանում է գործունեության այն տեսակին, որի միջոցով կամ միջնորդությամբ իրականացվում է վերահսկողություն սոցիալական երևույթների նկատմամբ:

Լրագրողի աշխատանքի առարկան մարդն է, անհատը, որով էլ պայմանավորվում է այն հանգամանքը, որ մնացած բոլոր մասնագիտությունների աշխատանքային բարոյականության նորմերին ավելանում է մի նոր տարր՝ մարդկային փոխհարաբերությունների կարգավորման տարրը: Եվ, ի տարբերություն մյուս մասնագիտությունների, լրագրողի ազդեցությունը մարդու, սուբյեկտի վրա շատ ավելի մեծ է և գործնական:

Մասնագիտական պարտք հասկացությունը հստակեցնում է հասարակության կողմից բարոյական պահանջները՝ հաշվի առնելով այն հատուկ պայմաններն ու գործունեության միջոցները, որոնք, որպես մասնագետ, ունի լրագրողը: Սրանով է պայմանավորված լրագրողի պատասխանատվության հատուկ նշանակությունն իր գործունեության ընթացքում:

Լրագրողի մասնագիտական պատասխանատվությունը սերտորեն կապված է իր՝ անձնական, անհատական պատասխանատվության հետ: Այն դրսևորվում է մարդու՝ իր գործողությունների համար ինքնուրույն պատասխանատվություն ստանձնելու և, համապատասխանաբար, իր գործելակերպն ուղղելու մեջ, այսինքն՝ առաջնորդվելու ոչ միայն անհրաժեշտ շարժառիթներով, այլ նաև սեփական վարքագիծը ենթարկելու լրացուցիչ սրբագրման, գնահատելու արված և արվելիք գործողությունները:

Այսպիսով, լրագրողի բարոյական ինքնատիրապետումը պայմանավորված է ոչ միայն նրանով, թե որքան նպատակաուղղված և ինչքան են օգտագործված հասարակության կողմից իրեն ընձեռած հնարավորությունները, այլև այն բանով, թե որքանով է օգտագործվել սեփական ներուժը՝ գիտելիքները, փորձը, հմտությունը, տաղանդը և այլն:

Եթե ուշադիր զննենք լրագրողի գործունեությունը, ապա պարզ կտեսնենք, թե ինչպես են հասարակական նորմերը դառնում նրա աշխատանքն ուղղորդողը: Բարոյական գիտակցության կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, թե ինչպես են հասարակությունը, կոնկրետ կերպարները և հասարակական նորմերը ներթափանցում լրագրող-սուբյեկտի մեջ, հաստատվում նրա ինքնագիտակցության և դիրքորոշման մեջ: Սակայն այս փոխակերպումն ինքնակա չէ: Այն սերտորեն շաղկապված է լրագրողի սոցիալական կերպարը կազմող բազմաթիվ տարրերին, ինչպես, օրինակ, նրա «ես»-ի պահանջները, հետաքրքրությունները, արժեքների նկատմամբ իր պատկերացումներն ու գնահատականը, որոնց հանրագումարն էլ արտացոլվում է լրագրողի ներքին կարգավորիչների դերում՝ բացահայտելով լրագրողի վարքագիծը: Սեփական պարտքի զգացողությունը դրսևորվում է սոցիալական որոշակի թելադրանքով:

Հասարակության կողմից որպես լրագրողի տրվող գնահատականը հանդես է գալիս նրա անհատական գնահատականին համարժեք: Այսպես, օրինակ, *պատիվ, արժանապատվություն* հասկացությունը հանդես է գալիս, մի կողմից, որպես անհատի անձնական հատկություն (այսինքն, նա իրեն թույլ չի տա իր արժանապատվությունը վնասող արարք), մյուս կողմից՝ որպես պարտքի այնպիսի դրսևորում, որն ավելի վերաբերում է իր մասնագիտական գնահատականին:

Լրագրողին ընձեռված գործողությունների հարաբերական ազատությունը նրա առջև բացում է վարվելաձևի լայն հնարավորություններ: Ինչ խոսք, այս գործում անհրաժեշտ է անհատական նախաձեռնության լայն հնարավորություն, անհատական հակումների, մտքի և երևակայության անսահման ազատություն, ինչպես նաև ձևի և բովանդակության ազատ ընտրության հնարավորություն: Այս ամենի հիմքում, իհարկե, կարևորվում են լրագրողի մասնագիտական գիտելիքները:

Յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում իր գործողությունն ու վարքագիծը լրագրողը, անշուշտ, ի հայտ է բերում գնահատման որոշակի չափանիշների հիման վրա: Անձնական և հասարակական շահերի զուգադիպման խնդիրը համադրվում է գործունեության ընթացքում կիրառված միջոցների ու նպատակների խնդիրներին:

Միջոցներ հասկացությունն իր մեջ ամփոփում է ոչ միայն ձևերի, ոճերի, գործելակերպի, այլ նաև գործունեության բնույթի, դրանց ընտրության տարբեր շարժառիթների համամասնությունը: Սա է այն պատճառը, որով խիստ կարևորվում է բարոյական կարգավորիչների թելադրանքով նպատակաուղղված միջոցների ու ձևերի ճիշտ ընտրությունը:

Բարոյական նորմերի դրսևորման ընդհանուր մեխանիզմը կարելի է պատկերացնել հետևյալ տարրերի փոխազդեցությամբ. *իրավիճակ՝ դրա ճիշտ գնահատականը և դրանից բխող գործողությունն ու դրա հետևանքը*:

Մարդու կարծիքն ու համոզմունքները նրա ներաշխարհի մի մասն են: Դրանք արտահայտելու հնարավորությունը մարդու ազատությունն է, որին ոչ ոք չպետք է բռնանա՝ ո՛չ պետությունը, ո՛չ հասարակությունը, ո՛չ այլ մարդ: Մարդը կարող է չհայտնել իր կարծիքը, ոչ ոք չի կարող ստիպել նրան հակառակը: Նա կարող է պնդել իր կարծիքը՝ դա նրա իրավունքն է[1]: Խոսքի ազատության գաղափարը ներառում է մարդու այլ իրավունքներ ևս, որոնցից յուրաքանչյուրը խոսքի ազատության մի մասն են կազմում. կարծիք ունենալու, ազատ հաղորդակցվելու, սեփական համոզմունքներ ունենալու, լռելու, ամենատարբեր աղբյուրներից տեղեկատվություն պահանջելու և ստանալու, այլ մարդկանց հետ խմբեր կազմելու և այլ իրավունքներ: Խոսքի ազատության պաշտպանության շնորհիվ հաստատվել են չորս առանձին արժեքներ՝ ա) ճշմարտության բացահայտում, բ) մասնակցություն ժողովրդավարությանը, գ) գաղափարների շուկա, որը հնարավորություն է տալիս կոնֆլիկտները լուծել առանց բռնության, դ) անհատի ինքնարտահայտում և ինքնիրացում:

Առանց խոսքի ազատության՝ անհնար կլիներ ճշմարտության բացահայտումը: Իրավական համակարգը պետք է ապահովի բոլոր տեսակի

[1] Այս իրավունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության մեջ:

գաղափարների ազատ արտահայտումը և փոխանակումը՝ հնարավորություն ստեղծելով անարգել, առողջ և բաց երկխոսության համար: Բոլոր ժամանակներում պետությունը փորձել է միջամտել խոսքի ազատության իրավունքի իրականացմանը և իր գործողություններն արդարացրել նրանով, որ խոսքը կարող է վնասաբեր լինել, գաղափարները՝ վտանգավոր, և որ պետությունն այս պարագայում պարտավոր է միջոցներ ձեռնարկել համընդհանուր բարօրությունը և ազգային անվտանգությունն ապահովելու նպատակով:

Խոսքի ազատության իրավունքը խիստ կարևոր է որոշումների կայացման գործընթացում բանիմաց քաղաքացիների մասնակցությունն ապահովելու համար: Այն ստիպում է պետական չինովնիկներին պատասխանատվություն ունենալ հասարակության առաջ և միշտ հաշվետու լինել իրենց արարքների համար: Այս իրավունքը նաև կայունություն է ապահովում հասարակության ներսում: Պատմությունը ցույց է տալիս, որ մարդիկ իրենց նպատակներին հասնելու համար ավելի հազվադեպ են դիմում բռնության, եթե հնարավորություն ունեն ազատ արտահայտել իրենց դժգոհություններն ու տեսակետները: Այսպիսով, խոսքի ազատությունն ապահովում է հասարակության ներսում փոփոխությունների սահուն իրականացումը՝ առանց հեղաշրջումների, արյունալի իրադարձությունների:

Հայաստանի Հանրապետությունում խոսքի ազատությունը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ. «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»[2]: Սակայն մեր հանրապետությունում խոսքի ազատության իրավունքը որոշ դեպքերում սահմանափակվում է մարդու այլ հիմնարար իրավունքների պաշտպանության նպատակով: Այդ իրավունքներից է մարդու պատվի և արժանապատվության իրավունքը: Պատիվը՝ որպես իրավական արժեք, քաղաքացու բարոյական մասնագիտական, գործարար որակների դրական գնահատումն է հասարակության կողմից: Դա պայմանավորված է քաղաքացու վարքագծով, պետության, հասարակության, մարդկանց նկատմամբ նրա վերաբերմունքով: Արժանապատվությունը՝ որպես իրավական արժեք, անձի՝ իր որակների, ունակությունների, աշխարհայացքի, իր հասարակական նշանակության ինքնագնահատականն է: Դա հիմնվում է հասարակության կողմից անձին տրված գնահատականների վրա:

Գործարար համբավն իր պրոֆեսիոնալ, ծառայողական, պայմանագրային և այլ պարտավորությունների նկատմամբ անձի՝ բացառապես բարեխիղճ վերաբերմունք ունենալու մասին գործընկերների, շրջապատի գնահատականն է: Անձի կայուն գործարար համբավն ապահովում է նրան զգալի եկամուտ, ինչը բարերար կերպով է անդրադառնում անձի սոցիալական դերի վրա:

2005 թ. նոյեմբերի 27-ին ընդունված ՀՀ Սահմանադրության հոդված 14-ը սահմանում է, որ մարդու արժանապատվությունը, որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և

[2] ՀՀ Սահմանադրություն, 27.XI.2005, հոդված 27, կետ 2:

պաշտպանվում է պետության կողմից: Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի այս իրավունքի պաշտպանության երկու կարգ՝ քաղաքացիական և քրեաիրավական:

Համաձայն քաղաքացիական պաշտպանության՝ պատվի և արժանապատվության քաղաքացիական պաշտպանությունն առաջին հերթին ապահովում է «Քաղաքացիական օրենսգրքի» հոդված 19-ը: Այս հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել հերքելու իր պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավն արատավորող տեղեկությունները, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը: Քաղաքացու պատվի և արժանապատվության պաշտպանությունը շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է նաև նրա մահից հետո»[3]: Սակայն մեր օրենսդրությունում չկան հստակ, ստույգ չափանիշներ՝ տեղեկությունների արատավորող բնույթը հստակ որոշելու համար: Որոշում ընդունելու համար դատարանը հիմք է ընդունում այն հանգամանքը, թե, արդյոք, արատավորող տեղեկությունները հասարակության մեջ ընկալվում են որպես այդպիսին, թե՝ ոչ:

«Քաղաքացիական օրենսգրքի» հոդված 19-ի կետ 2-ը սահմանում է, որ եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածվել են ԶԼՄ-ով, ապա դրանք պետք է հերքվեն նույն միջոցներով: Եթե նշված տեղեկություններն առկա են կազմակերպության փաստաթղթերում, ապա նման փաստաթղթերը պետք է փոխարինվեն կամ հետ կանչվեն: Այլ կերպ հերքման կարգը սահմանվում է դատարանով:

Նույն օրենքի հոդված 19-ի կետ 2-ն ամրագրում է, նաև, որ քաղաքացին, որի մասին զանգվածային լրատվության միջոցները հրապարակել են նրա իրավունքները կամ օրենքով պաշտպանվող շահերը ոտնահարող տեղեկություններ, իրավունք ունի իր պատասխանը հրապարակել զանգվածային լրատվության նույն միջոցում: Իսկ կետ 4-ով՝ անձին իրավունք է վերապահվում կեղծ տեղեկությունների հերքման հետ մեկտեղ պահանջել նաև դրանց տարածմամբ պատճառված վնասի հատուցում: Իսկ եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող անձի ինքնությունը պարզելն անհնար է, ապա քաղաքացին, որի մասին տեղեկություններ են տարածվել, իրավունք ունի դիմել դատարան՝ տարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու պահանջով (կետ 5):

Անճշտությունների հերքման ժամկետները և կարգը սահմանում է 2003 թվականի սեպտեմբերի 23-ին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ը, որում նշվում է (կետ 1), թե անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական տեղեկության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ փաստերը համապատասխանում են իրականությանը:

---

[3] ՀՀ «Քաղաքացիական օրենսգիրք», հոդված 19, կետ 1:

Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այդ տեղեկության տարածման օրվանից: Նույն հոդվածի կետ 2-ի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջը ստանալուց հետո՝ մեկ շաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքումը տարածելու մերժման մասին: Հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա՝ հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով (կետ 3): Հերքումն իրականացվում է դրա պահանջը ստանալու օրվանից հետո՝ մեկ շաբաթյա ժամկետում: Եթե այդ ժամանակահատվածում լրատվամիջոցը թողարկում չի ունենալու, ապա հերքումը պետք է լինի հաջորդ թողարկման մեջ: Հերքման պահանջի հետ մեկտեղ անձն իրավունք ունի պահանջել նաև իր պատասխանի հրապարակումը (կետ 5): Օրենքը նախատեսում է, որ անձը կարող է պատասխանի հրապարակումը զուգակցել կամ չզուգակցել հերքումով:

Բացի նյութական վնասից, ԶԼՄ-ով հրապարակվող՝ արատավորող կամ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններն անձին կարող են հոգեկան տառապանք, ցավ պատճառել, որն իրավաբանորեն կոչվում է բարոյական վնաս: Հայաստանում բարոյական վնասը ենթակա չէ փոխհատուցման: Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության համաձայն, կարծիք արտահայտելու համար դատական պատասխանատվության չեն կանչվում:

2003 թ. ընդունված «Քրեական օրենսգրքի» 135 ու 136 հոդվածները վերաբերում են անձի պատվի ու արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններին, որպիսիք, ըստ օրենքի, զրպարտությունն ու վիրավորանքն են: ՀՀ «Քրեական օրենսգրքի» հոդված 318-ը վերաբերում է իշխանության ներկայացուցչին հասցրած վիրավորանքին: Վերջինիս համաձայն, իշխանության ներկայացուցչին ԶԼՄ-ով վիրավորելը պատժվում է նվազագույն աշխատավարձի երկու հարյուրապատիկից չորս հարյուրապատիկի չափով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով: Չգիտես ինչ տրամաբանությամբ ու սկզբունքներից ելնելով՝ «Զանգվածային լրատվամիջոցների մասին» ՀՀ գործող օրենքում (2003 թ.) բացակայում են լրագրողի իրավունքներն ու պարտականությունները սահմանող հոդվածները: Այդքան քարկոծված նախկին օրենքը (1991 թ. ընդունված «Մամուլի և Զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենք) «Լրագրողի իրավունքներն ու պարտականությունները» սահմանող գլխում (գլուխ 4)՝ 27(Լրագրողի իրավունքները) և 28 հոդվածներով հստակ սահմանում էր լրագրողի իրավունքներն ու պարտականությունները, ինչը, բնականաբար, լրագրողին ևս մեկ պաշտպանության հնարավորություն էր ընձեռում:

«Զանգվածային լրատվամիջոցների մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի կետ 1-ում հստակ նշված է. «Անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախ-

տող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը»[4]: Առաջին օրինակի առնչությամբ նույն հոդվածի կետ 5-ում ամրագրված է. «Հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել իր պատասխանի հրապարակումը»: Նույն հոդվածի կետ 6-ը սահմանում է պատասխանի հրապարակման պահանջները՝ «Պատասխանը չպետք է հակասի սույն օրենքի պահանջներին և վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ»: Այս նույն հոդվածի կետ 3-ում նշված է. «Հերքում իրականացվում է լրատվության նույն միջոցով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով»: Նույնն է հաստատում նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդված 19-ի կետ 2-ը՝ «Եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը արատավորող տեղեկությունները տարածվել են ԶԼՄ-ով, ապա դրանք պետք է հերքվեն զանգվածային լրատվության նույն միջոցներով»:

Չնայած մասնագիտական պարտականության կանոններն ու օրենքներն ընդհանուր են բոլոր լրագրողների համար, սակայն յուրաքանչյուր առանձին ոլորտ լուսաբանող լրագրող ունի իր ոլորտին բնորոշ առանձնահատկություններից բխող պարտականություններ: Այսպես, իրավաբանական թեմաներ լուսաբանող լրագրողները յուրատեսակ միջնորդներ են դատական իշխանությունների և հասարակության միջև: Ավելին, հասարակության մեջ դատական իշխանության ունեցած հեղինակությունն ու վստահությունը մեծապես պայմանավորված է այն լուսաբանող լրագրողների մասնագիտական մակարդակով: Ինչպես արդեն նշեցինք, այսօր դեռևս բացակայում է դատավոր-լրագրող առողջ փոխհամագործակցությունը: Սա որոշակիորեն պայմանավորված է այս ոլորտում գործող լրագրողների իրավաբանական գիտելիքների պակասով, խնդրին մակերեսորեն կամ «մատների արանքով» վերաբերվելով, փաստերի միակողմանի լուսաբանմամբ և այլն: Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողները պետք է առավել գրագետ ու աչալուրջ լինեն, քանի որ նրանց աշխատանքն անմիջականորեն առնչվում է մարդկային ճակատագրին, «անմեղության կանխավարկածին»: Սակայն միշտ չէ, որ այս ոլորտի լրագրողները հետևողականություն են ցուցաբերում: Հայաստանում կա «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների կանոնագիրք», սակայն քչերն են դրան հաղորդակից: Քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ այս կամ այն հանցագործության բացահայտմանը վերաբերող նյութերում լրագրողը ոչ միայն խախտում է վերը նշված կանոնագրքի պահանջները, այլև Հայաստանի Հանրապետության և Միջազգային հռչակագրերի մի շարք օրենքներ: Լրագրողները նախապես սեփական որոկումներով պիտակավորում են անձին, մինչդեռ ՀՀ Սահմանադրության հոդված 22-ի կետ 1-ը

[4] «Զանգվածային լրատվամիջոցների մասին» ՀՀ օրենք, 2003, հոդված 8, կետ 1:

հավաստում է, որ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով»: Սահմանադրական այս դրույթին համահունչ է նաև «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողների կանոնագիրքը» (5-րդ կանոնի կետ 2). «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողը պարտավոր է պահպանել կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի անմեղության կանխավարկածի սկզբունքը: Սա նշանակում է, որ նախքան դատարանի մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, չի կարելի կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության մասին գրել՝ իբրև փաստի»[5]: Խոսքի ազատության տեսանկյունից էլ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային համաձայնագիրը սահմանում է որոշակի սահմանափակումներ: Համաձայն հոդված 19-ի կետ 3-ի, «Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքներից օգտվելը նախատեսում է հատուկ պարտավորություններ և պատասխանատվություն: Ըստ այդմ, այն կարող է զուգորդվել որոշ սահմանափակումներով, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և անհրաժեշտ լինեն այլ անձանց իրավունքները կամ վարկը հարգելու համար»[6]:

Քաղաքական թեմաներ լուսաբանող լրագրողն իր մասնագիտական պարտականությունների իրականացման սահմաններում է՛լ ավելի աչալուրջ պետք է լինի, քանի որ ինչպես նա, այնպես էլ այս ոլորտի բոլոր թեմաները հասարակության ուշադրության կենտրոնում են: Թույլ տրված որևէ սխալ, օգտագործված սխալ տերմին, բառի ոչ ճիշտ կիրառություն կարող են հանգեցնել անդառնալի հետևանքների: Սակայն կարծես թե մեր լրագրողներին ոչինչ չի մտահոգում, և նրանք հաճախակի թույլ են տալիս ամենատարբեր սխալներ: Հասարակության գիտակից հատվածն էլ, ասես, արդեն բանի տեղ չի դնում այդ ամենը:

Միևնույն ժամանակ, ՀՀ Սահմանադրության հոդված 27-ի կետ 1-ն ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք», իսկ կետ 2-ի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվական ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»[7]: «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն, «Սույն օրենքը կարգավորում է զանգվածային լրատվության իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանում է լրատվության ոլորտում խոսքի ազատության իրավունքի ապահովման երաշխիքները, տարածված տեղեկատվության հերքման և պատասխանի իրավունքի իրացման կամ համադրություններն ու այն հիմքերը, որոնց առկայության դեպքում լրատվական գործունեության իրականացնողները պատասխանատվության ենթակա չեն»[8]: Իսկ հոդված 4-ում նշված է. «Լրատվական գործու-

---

[5] «Իրավական թեմաներ լուսաբանող լրագրողի կանոնագիրք», կանոն 5, կետ 2:

[6] «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային համաձայնագիր, հոդված 19:

[7] ՀՀ Սահմանադրություն, հոդված 27, կետ 1:

[8] «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 1:

նեությունն իրականացնողները և լրագրողները գործում են ազատորեն՝ իրավահավասարության, օրինականության, խոսքի ազատության և բազմակարծության հիման վրա»[9]: «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան համաձայնագիրը հաստատում է վերը նշվածը. «Ամեն ոք ունի համոզմունքների ազատության և դրանք ազատորեն արտահայտելու իրավունք: Այդ իրավունքը ներառում է, անկախ պետական սահմաններից, բանավոր կամ գրավոր կամ մամուլի միջոցով, ինչպես նաև արտահայտման գեղարվեստական ձևերով կամ իր ընտրությամբ այլ միջոցով ցանկացած բնույթի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատություն»[10]: Շատ պատասխանատու և կարևոր է արտակարգ իրավիճակները լուսաբանող լրագրողի աշխատանքը: Ըստ մասնագիտական սկզբունքների, նա իր գործունեության ընթացքում պետք է առանձնահատուկ հոգատարություն ցուցաբերի լսարանի վշտի, կորստի, ընկճվածության և այլ զգացումների նկատմամբ: Հատկապես պետք է ուշադիր լինել հանցագործություններն ու դժբախտ պատահարները լուսաբանելիս՝ անհատի իրավունքներն ու զգացմունքները չոտնահարելու համար: Սակայն մեր զանգվածային լրատվամիջոցները 2006 թ. մայիսի 3-ի Երևան-Սոչի չվերթի ողբերգական իրադարձություններից հետո ամենևին էլ չպահպանեցին վերը նշված սկզբունքները և չկատարեցին իրենց մասնագիտական պարտականությունները՝ տալ ստուգված, հավաստի լուրեր, որոնք չեն վնասի դժբախտ պատահարից տուժած հարազատների առողջությունն ու հոգեկան վիճակը: Այստեղից հետևում է, որ տհաճ իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է, որպեսզի լրագրողը, օպերատորն ու ընդհանրապես յուրաքանչյուր մասնագետ ճիշտ կատարի իր պարտականությունները:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ МОРАЛЬНО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ В ЖУРНАЛИСТИКЕ

НАЛБАНДЯН Н. М.

Резюме

Совокупность принципов, норм и нравственного поведения составляют сущность профессиональной этики журналиста. В процессе журналистской деятельности профессионализм почти всегда проявляется в нравственном облике журналиста. Однако право на свободу слова, лежащее в основе его профессиональной деятельности, выходит за рамки этой деятельности, имея отношение к обществу в целом, к государственным структурам, должностным лицам и т. д. Свобода слова закреплена Конституцией РА, однако в законодательстве пока нет юридически определенных, четких и точных критериев.

---

[9] Նույն տեղում, հոդված 4:

[10] «Մարդու իրավունքների մասին» ամերիկյան կոնվենցիա, հոդված 13, կետ 1: